

Ռուբեն Մարատի Հակոբյան

Ծնվել էմ 1977 թ. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, ամուսնացած էմ, ունեմ երկու երեխա (դուստր և որդի):

Ավարտել էմ Հրազդանի 3-րդ միջնակարգ ռուսական դպրոցը: 1995 թվականին ընդունվել և 2000 թվականին գերազանցությամբ ավարտել էմ ՀՀ ՆԳ և ԱԱՆ Բարձրագույն դպրոցը (ՀՀ ոստիկանության ակադեմիան)՝ «իրավագիտություն» մասնագիտությամբ, շնորհվել է իրավաբանի որակավորում:

2000-2008 թվականներին աշխատել էմ ՀՀ ներքին գործերի նախարարության, հետագայում ՀՀ ոստիկանության, քննչական գլխավոր վարչության Լոռու մարզային քննչական բաժնում (հետագայում վարչություն) որպես քննիչ, ավագ քննիչ, ՀԿԳ ավագ քննիչ: 2008 թվականի նոյեմբերից անձնական նախաձեռնությամբ ազատվել էմ ՀՀ ոստիկանությունում ծառայությունից:

2008 թվականի հոկտեմբերի 14-ին ստացել էմ փաստաբանական գործունեության արտոնագիր: 2008 թվականի նոյեմբեր - 2011 թվականի մարտ ընկած ժամանակահատվածում աշխատել էմ որպես հանրային պաշտպան՝ Հանրային պաշտպանի գրասենյակի Վանաձորի նստավայրում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 26.09.2014 թ. հրամանով նշանակվել էմ ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության ղեկավար:

2011 և 2013 թվականներին փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել էմ փաստաբանների պալատի խորհրդի անդամ:

2001-2004 թվականներին «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավունքի ամբիոնում դասավանդել էմ «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն» և «Քրեագիտություն» առարկաները: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով 2012թ. նշանակվել էմ նույն կրթահամալիրի պետական քննական հանձնաժողովի անդամ:

2017-2018 թվականներին ՀՀ փաստաբանների դպրոցում դասավանդել էմ «Ասպացույցները քրեական դատավարությունում» առարկան:

Հանդիսանում էմ «Հայաստանի իրավաբանների միություն» հասարակական կազմակերպության անդամ: